ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. արդյունաբերության ոլորտում թողարկվել է 1327.1 մլրդ դրամի արտադրանք, աճը՝ 5.2%: Իրացվել է 1345.8 մլրդ դրամի արտադրանք, որի 39.2%-ը՝ արտահանման միջոցով:

«**ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության» համար** ՀՀ պետական բյուջեով նախատեսված 475.0 մլն դրամը ֆինանսավորվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության ներքո 8 ոլորտային ռազմավարությունների գործո-ղությունների ծրագրով նախատեսված աշխատանքները: Մասնակի սուբսիդավորվել են 16 ընկերության վարկերի տոկոսադրույքներ, բավարարվել է ստացած սերտիֆիկատների, կենսահամարժեքության փորձաքննության, որակի կառավարման համակարգերի ներդրման համար ծախսերի համաֆինանսավորման գծով 8 կազմակերպության 12 հայտ: Կայացել են «Արտադրված է Հայաստանում էքսպո 2015» (ապրիլի 26-28) և «Yerevan Show» 5-րդ միջազգային ոսկերչական ցուցահանդեսները (հոկտեմբերի 24-26):

Արդյունաբերական նպատակներով օգտագործված քսայուղերի ակցիզային հարկի վերադարձման ուղղությամբ բավարարվել են 3 ընկերության 9 հայտեր, վերադարձված ակցիզային հարկի գումարները կազմել են 59.8 մլն ՀՀ դրամ: 200 մլն դրամը գերազանցող ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծված սարքավորումների ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգման նպատակով հավանության է արժանացել 9 ներդրումային ծրագիր, որոնց արդյունքում սարքավորումների ձեռք բերման համար իրականացվելու է 9.94 մլրդ ՀՀ դրամի ներդրում:

Արդյունաբերական ընկերությունների գործունեությունը պարզեցնելու նպատակով մշակվել են ՀՀ կառավարության որոշման 20 նախագծեր (13-ն արժանացել են հավանության, 7-ը՝ գտնվում են քննարկման փուլում) և ՀՀ օրենքի 11 նախագիծեր (8-ն ընդունվել է, 3-ը՝ գտնվում են քննարկման փուլում):

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ԻՆՈՎԱՑԻԱ

2015թ. տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի հետազոտության արդյունքների համաձայն՝ ոլորտում գործող ընկերությունների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 13.6%-ով և կազմել է 450 ընկերություն: Ոլորտում զբաղվածների թվաքանակն աճել է 12.4%-ով և կազմել է շուրջ 13000 մարդ, իսկ ՏՏ ոլորտի ընդհանուր հասույթը կազմել է 550 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով ավելի քան 17.0%-ով:

«**Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ**» 2015**թ**. **ծրագրի** շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 88.597 մլն դրամը ֆինանսավորվել է ամբողջությամբ:

2015թ. գործում է 2014թ. ընդունված «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ 2015թ.-ից սկսել են ոլորտի հավաստագրված սկսնակ ընկերություններին տրամադրել հարկային արտոնություններ, մասնավորապես, շահութահարկի 0% և եկամտային հարկի 10% դրույքաչափերի կիրառում: Արտոնությունների տրամադրումը խթանեց ոլորտում նոր ընկերությունների և աշխատատեղերի ստեղծումը: Ստեղծվել են ոլորտի 79 սկսնակ ընկերություններ և 329 նոր աշխատատեղեր: Նշված ընկերություններից 65-ը ստացել են հավաստագրեր՝ հարկային արտոնություններից օգտվելու համար (283 նոր աշխատատեղեր):

Հայաստանում արդյունավետ գործունեություն է ծավալում նաև ՀՀ կառավարության ներդրումային բաժնեմասով 2013թ. ստեղծված վենչուրային ֆոնդը, որի կառավարիչ «Գրանատուս Վենչուրս» ՓԲԸ

կողմից պայմանագրեր են ստորագրվել 8 ընկերությունների հետ՝ մոտ 1.5 մլն ԱՄՆ դոլարի չափով: Նշված ընկերությունների կողմից ստեղծվել են շուրջ 205 նոր աշխատատեղեր:

Շարունակվում են նաև ՏՏ ոլորտի վերազգային կազմակերպությունների հետ համատեղ նախաձեռնությունների իրականացումը: Մասնավորապես, 2015թ. տեղի է ունեցել «Մայքրոսոֆթ» ընկերության պատվիրակության այցը Հայաստան, որի շրջանակում ընկերության հետ ստորագրվել են նոր համաձայնագրեր՝ ուղղված համատեղ նոր ծրագրերի իրականացմանը:

ՀՀ-ում ներկայումս հաջողությամբ գործում են «ԱյԲիԷմ»-ի Նորարարական լուծումների և տեխնոլոգիաների կենտրոնը, «Մայքրոսոֆթ» ինովացիոն կենտրոնը, Հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության կենտրոնը, «mLab ECA» մոբայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիան, Հայկական ազգային ճարտարագիտական լաբորատորիան:

2015թ. կայացել են արդեն ավանդական դարձած «Դիջիթեք» բիզնես-ֆորումը, «Դիջիթեք Էքսպո 2015» տեղեկատվական, հեռահաղորդակցման և բարձր տեխնոլոգիաների ցուցահանդեսը, «Արմթեք 2015» բարձր տեխնոլոգիաների ամենամյա համաժողովը: 2015թ. հոկտեմբերի 4-ից նոյեմբերի 5-ը իրականացվել է «Հայկական ՏՀՏ եվրոպական ավտոարշավ» ծրագիրը, որին մասնակցել են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի 26 հայկական ընկերությունների 36 պատվիրակներ: ՏՀՏ ավտոարշավը ներառել է 18 երկրներ: Պատվիրակության մասնակիցներն ավելի քան 300 նախնական պայմանավորվածություն են ձեռք բերել եվրոպական գործընկերների հետ:

ՀՀ սահմանամերձ համայնքների բնակչության շրջանում ինտերնետ հասանելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ ՀՀ շուրջ 344 հեռավոր, սահմանամերձ, բարձրլեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում տեղադրվել են ինտերնետ հասանելիության անլար սարքեր և 1 տարի ապահովվել է բնակիչներին անվճար ինտերնետի հասանելիությունը:

«Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացման» 2015թ. ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 150.0 մլն դրամից փաստացի ֆինանսավորվել է 132.5 մլն դրամ: Հաջողությամբ շարունակում է գործել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, որում տեղակայված են 23 տեղական և արտասահմանյան կազմակերպություններ: Հիմք ընդունելով Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի հաջողված մոդելը՝ աշխատանքներ են իրականացնում Վանաձորում համանման տեխնոլոգիական կենտրոնի հիմնման ուղղությամբ, որը բացվելու է 2016թ.: Կազմակերպվել են Նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների և Գյումրու ու Վանաձորի համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթները, որոնց արդյունքում հաղթող ճանաչված 33 ծրագրեր արժանացել են դրամաշնորհների՝ մինչև 50000 ԱՄՆ դոլարի չափով: Ծրագրի իրականացման արդյունքում ստեղծվել են 235 նոր աշխատատեղեր:

Տնտեսության ինովացիոն զարգացման հայեցակարգային հիմնադրույթների ամրագրում. Տնտեսության ինովացիոն զարգացման և քաղաքականության օրակարգում դրա համակարգային ընկալումն ամրագրելու նպատակով մշակվել է «Հայաստան. կայուն տնտեսական զարգացման ռազմավարություն. ինովացիոն առաջընթացի ուղին» փաստաթուղթը: Մեծ իմաստով սրանով հավակնություն է դրվում ձևակերպել երկրի զարգացման տեխնոլոգիայի վերափոխման համար անհրաժեշտ հայեցակարգային շրջանակը: Փաստաթղթի առաջին նախագիծը ներկայացվել է հունիսի 30-ին ՀՀ կառավարության ընդունելությունների տանը կայացած ՀՀ «Տնտեսական օրակարգ» համաժողովում: Փաստաթղթի վերաբերյալ նկատառումներ և առաջարկություններ ստանալու նպատակով այն ներկայացվել է ավելի քան 70 շահառուների (պետական մարմիններ, միջազգային կազմակերպություններ, մասնագիտական շրջանակներ): Փաստաթղթի լրամշակված նախագիծը նոյեմբերին ներկայացվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի

«Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» 25-րդ գիտաժողովի և Դիլիջանում Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կողմից կազմակերպված «Հայաստան 20.18» բիզնես ինովացիոն ֆորումում: Փաստաթուղթը որպես արձանագրային որոշման նախագիծ սահմանված կարգով 2015թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ:

Ինովացիոն ոլորտում միջազգային համագործակցության ապահովման ուղղությամբ աշխատաքներ են իրականացվել. ԵԱՏՄ շրջանակենրում՝ Եվրասիական տեխնոլոգիական պլատֆորմների ձևավորման ուղղությամբ, ԱՊՀ շրջանակենրում՝ ապահովվել է մասնակցությունը «ԱՊՀ մասնակից պետությունների ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականը համագործակցության միջպետական ծրագրի» իրականացման աշխատանքներին, Ճապոնիայի կառավարության Զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության ծրագրերի (ODA) շրջանակներում՝ հայտ է ներկայացվել տեխնիկական համագործակցության և դրամաշնորհային ծրագիր իրականացնելու համար, Ասիական զարգացման բանկի հետ՝ աշխատանքներ են իրականացվել «Արտահանմանն ուղղված և ինովացիոն արդյունաբերության զարգացման տեխնիկական աջակցության» ծրագրի մշակման և հաստատման ուղղությամբ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՎԾ հրապարակած վիճակագրական տվյալների համաձայն 2015թ. Հայաստան է ժամանել 1192.1 հազար զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 1.0%-ով:

Ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում մշակվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել Զբոսաշրջության ոլորտը կարգավորող օրենսդրական փաթեթը՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծը, «Ավելացված արժեքի հարկի մասին», «Մաքսային կարգավորման մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: 2015թ. հուլիսի 30-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Զբոսաշրջային ավտոբուսի որակավորման կարգը, ընթացակարգը, չափանիշները, վկայականի և նշանի ձևերը հաստատելու մասին» N864-Ն որոշումը: ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի նիստի N54 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել զբոսաշրջության նպատակով քարանձավների արդյունավետ օգտագործումն ապահովող միջոցառումների ծրագիրը: 2015թ. հոկտեմբերի 2-ին ուժի մեջ է մտել ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2015թ. օգոստոսի 21-ի «ՀՀ էկոնոմիկայի նախարարի՝ 2015թ. մարտի 19-ի N170-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N1173-Ն հրամանը՝ ուղղված սոցիալական փաթեթի հանգստի ապահովման ծառայության բարելավմանը:

«**Զբոսաշրջության աջակցության ծառայություններ**» 2015թ. ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 188.4 մլն դրամից փաստացի ֆինանսավորվել է 185.7 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում մասնավորապես իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Հայկական զբոսաշրջային արդյունքի միջազգային և ներքին շուկաներում խթանման շրջանակներում տպագրվել է Ջերմուկ քաղաքի անգլերեն և իսպաներեն ֆոտոալբոմը 3000 օրինակով: Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել, այդ թվում կնքվել է համապատասխան պայմանագիր, Հայաստանը ներկայացնող 20000-ական բրոշյուրներ և քարտեզներ տպագրելու ուղղությամբ: Նկարահանվել է ՀՀ զբոսաշրջային գրավչությունը ներկայացնող 10 րոպե տևողությամբ հոլովակ: Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացվել է 7 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներում: Կազմակերպվել են շուրջ 170 օտարերկրյա լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների և պոտենցիալ ներդրողների Հայաստան ճանաչողական այցեր (Իսրայելից, Ռուսաստանից, Ավստրիայից,

Գերմանիայից, Չինաստանից, Իտալիայից): Պետական աջակցություն է ցուցաբերվել Գառնիի, Գորիսի, Դիլիջանի, Ծաղկաձորի և Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին:

Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման շրջանակներում մշակվել է ՀՀ մարզերում 40 քայլարշավային երթուղիներ և տեղադրվել միջազգային մասնագիտացված ինտերնետային կայքում: Պետական աջակցությամբ ՀՀ մարզերում կազմակերպվել է 5 ավանդական փառատոն:

Մարդկային ռեսուրսների զարգացման շրջանակներում Երևանի Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնում անցկացված միջազգային դասընթացին մասնակցել են զբոսավարներ Հայաստանից և Իրանից: Նոյեմբերի 6-ից մեկնարկել է սկսնակ զբոսավարների պատրաստման 6-ամսյա դասընթացը:

Միջազգային համագործակցության շրջանակներում՝ Իրանի Թեհրան քաղաքում փետրվարի 11-14-ը կայացել է ՀՀ և ԻԻՀ միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության տեխնիկական հանձնաժողովի երրորդ նիստը: Քննարկվել են զբոսաշրջության բնագավառում երկկողմ համագործակցության հուշագրի նախագիծը և այլ հարցեր:

ՀՀ Նախագահի Չինաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2015թ. մարտի 25-ին ստորագրվել է «ՀՀ կառավարության և ՉԺՀ կառավարության միջև զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը:

Մայիսի 26-30-ը Խորվաթիայի Ռովին քաղաքում հայկական պատվիրակությունը մասնակցել է ՄԱԿ ԶՀԿ Գործադիր Խորհրդի 100-րդ նստաշրջանի աշխատանքներին, որի նախնական օրակարգում, ներառված էր «Կոնֆլիկտային տարածքներում զբոսաշրջային քարոզչությունը արգելելու վերաբերյալ» հակաղարաբաղյան բանաձևի նախագծի վերաբերյալ ՄԱԿ ԶՀԿ Զբոսաշրջության էթիկայի համաշխարհային հանձնաժողովի կարծիքի քննարկումը: Հարցի շրջանակներում ադրբեջանական կողմը գրավոր ներկայացրել էր բանաձևի նախագիծ՝ պնդելով դրա ընդունումը ՄԱԿ ԶՀԿ Գործադիր խորհրդի կողմից և ներկայացումը ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեային: ՀՀ արտաքին գործերի և էկոնոմիկայի նախարարությունների համատեղ ջանքերով ադրբեջանական կողմի ներկայացրած բանաձևի ընդունումը կանխվել է:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱ

Նոր քաղաքականության իրականացման համար արդյունավետ իրավական հիմքի ապահովման նպատակով 2015թ. վերանայվել է ոլորտը կարգավորող ողջ իրավական դաշտը: 2015թ. օգոստոսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքից բխող և օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր, որոնցով արդիականացվել է նաև տեղական ավիաընկերությունների հավաստագրման գործընթացը:

Բանակցություններ են վարվել մի շարք պետությունների ավիացիոն իշխանությունների հետ՝ գործող իրավապայմանագրային դաշտի վերանայման և նոր պայմանագրերի կնքման ուղղությամբ: Անցկացվել են քննարկումներ ԵՄ ընդհանուր ավիացիոն գոտուն ՀՀ միանալու շուրջ, 2015թ. դեկտեմբերի 7-ին Եվրոպական Հանձնաժողովը հավանության է արժանացրել ԵՄ ավիացիոն նոր ռազմավարությունը, որը ներառում է նաև Հայաստանի հետ Ընդհանուր ավիացիոն գոտու մասին հանաձայնագրի բանակցումը, ինչը հնարավորություն կտա ազատականացնել ոլորտը ԵՄ անդամ պետությունների հետ:

2015թ. դեկտեմբերին ստորագրվել է Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության և ՀՀ միջև օդային հաղորդակցությունների մասին միջկառավարական համաձայնագիրը: Երկու կողմերի ավիաընկերություններին փոխադարձաբար օդի 5-րդ ազատության իրավունք է տրամադրվել ուղևորափոխադրումների և 7-րդ ազատության իրավունք՝ բեռնափոխադրումների իրականացման համար:

Փոխադարձաբար օդի 5-րդ ազատության իրավունք է տրամադրվել 6 պետության (Թուրքմենստան, Կատար, Քուվեյթ, Հունաստան, Լյուքսեմբուրգ, Իսլանդիա) ավիաընկերություններին:

Աշխատանքներ են իրականացվել Իտալիայի, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Նորվեգիայի, Իսրայելի, Չինաստանի, Սինգապուրի, Բուլղարիայի, Հունաստանի ավիացիոն իշխանությունների հետ օդային հաղորդակցության մասին համաձայնագրի լրամշակման, վերանայման կամ կնքնման ուղղությամբ:

Բանակցություններ են վարվել ավելի քան 30 ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ ինչի արդյունքում որոշ ավիաընկերություններ մուտք են գործել հայկական շուկա կամ վերադարձել են հայկական շուկա (Aegean Airways, Georgian Airways, Iraqi Airways, Al Naser, Mahan Air, Middle East Airways, S7 Airlines, LOT, Czech Airlines): Կատարական Qatar Airways ավիաընկերությունը, որն ունի ուղևորափոխադրումների լայն ցանց և սպասարկում է ավելի քան 150 ուղղություններ, 2016թ. մայիսից դեպի Երևան չվերթներ կիրականացնի:

ՀՀ մրցունակ և շարունակական օդային փոխադրումների ծառայությունների մատուցման ծրագրի խթանման նպատակով ապահովվել է Հայաստանի պատվիրակությունների մասնակցությունը 3 համաժողովների («Եվրոպայի ուղիների զարգացում», Աբերդին, Մեծ Բրիտանիա, «RoutesSilkRoad 2015», Թբիլիսի, «Համաշխարհային ուղիների զարգացում» Դուրբան, ՀԱՀ):

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԱՏՄ համագործակցություն: ՀՀ-ի ԵԱՏՄ-ին անդամակցությամբ պայմանավորված՝ առաջնահերթ ուշադրություն է դարձվել նոր պայմաններում իրավական դաշտի ձևավորմանը, որը ուղղված է հայ գործարարի շահերի պաշտպանությանը ԵԱՏՄ շուկայում: Ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ուղղված են ԵԱՏՄ օրենսդրությանը համապատասխանեցմանը, մասնավորապես՝ սակագնային և ոչ սակագնային կարգավորման ոլորտում:

Շարունակվում են աշխատանքները ԵԱՏՄ անդամ-պետությունների և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության միջև «Ազատ առևտրի գոտու մասին» ստորագրված Համաձայնագրի շրջանակներում վիետնամական շուկա հայկական ծագման ալկոհոլային արտադրանքի ծավալների ավելացման նպաստավոր պայմանների ապահովման ուղղությամբ:

Մեկնարկել են աշխատանքներն երրորդ երկրների հետ (Եգիպտոսի Արաբական Հանրապետության, Իսրայել պետության, Հնդկաստանի Հանարպետության, Ինդոնեզիայի Հանրապետության) ԵԱՏՄ անդամ-պետությունների արտադրանքի՝ արտոնյալ ռեժիմով արտահանումն ու ներմուծումն ազատականացնելու նպատակահարմարության վերաբերյալ: Ներկայումս քննարկվում է նաև Կամբոջայի և Թունիսի հայտերը ԵԱՏՄ անդամ-պետությունների հետ «Ազատ առևտրի գոտու մասին» համաձայնագիր կնքելու առնչությամբ: Առևտրի խթնման ուղղությամբ աշխատանքներ են տարվում առևտրատնտեսական փաստաթղթերի շրջանակներում Չինաստանի, Պերուի, Չիլիի, Իրանի և Կորեայի հետ:

ԵՄ համագործակցություն: 2015թ. հոկտեմբերի 16-ին Երևանում տեղի ունեցավ ՀՀ-ԵՄ առևտրի, տնտեսական և համապատասխան իրավական հարցերով ենթակոմիտեի հերթական՝ 14-րդ նիստը, իսկ նոյեմբերի 4-ին՝ ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական՝ 16-րդ նիստը:

2015թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում տրվել է ԵՄ-Հայաստան ապագա նոր շրջանակային համաձայնագրի բանակցությունների մեկնարկը: Համաձայնագրի առևտրի և ներդրումների ուղղությամբ բանակցային աշխատանքները համակարգվելու է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Բանակցային գործընթացի շրջանակներում 2016թ. փետրվարի 15-ից 17-ը Բրյուսելում նախատեսվում է անցկացնել Առևտրի և ներդրումների հարցերի ուղղությամբ բանակցությունների առաջին փուլը:

2015թ. ընթացքում շարունակվել է համագործակցությունը ԵՄ Արևելյան գործընկերության «Տնտեսական ինտեգրման և ԵՄ քաղաքականություններին մոտարկման» պլատֆորմի և վերջինիս ներքո ստեղծված պանելների շրջանակներում:

Շարունակվել է ԵՄ «Արտոնությունների ընդլայնված և համալրված համակարգ (GSP+)» արտոնյալ առևտրային ռեժիմի մոնիտորինգի գործընթացը, որի շրջանակներում ռեժիմից օգտվելու համար նախապայման հանդիսացող 27 միջազգային կոնվենցիաների իրականացման վերաբերյալ հայկական կողմի 2-րդ զեկույցը պատրաստվել և ներկայացվել է ԵՄ կողմին: 2015թ. հոկտեմբերին եվրոպական կողմին է տրամադրվել Հայաստանին ԵՄ շուկայական տնտեսության կարգավիճակի շնորհման վերաբերյալ հայկական կողմի զեկույցն ու փաստաթղթերի ամբողջական փաթեթը:

2015թ. աշխատանքներ են իրականացվել ՀՀ-ԵՄ ընթացիկ աջակցության ծրագրերով նախատեսված միջոցառումների իրականացման ուղղությամբ, ԵՄ և ՀՀ միջև կնքվել են «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ ոլորտի զարգացմանը», «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրերը, «Ձեռնարկությունների և փոքր ու միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME) (2014-2020թթ.)» ծրագրին ՀՀ մասնակցության վերաբերյալ» համաձայնագիրը:

ԵՄ աջակցության գործիքներ: **Թվինինգ**. 2015թ. ընթացքում ավատվել է 1 ծրագիր, մեկնարկել է 2 ծրագիր, մշակման փուլում են 2 ծրագրի առաջարկ, ԵՄ պատվիրակությանն է ներկայացվել 1 ծրագրի առաջարկ, քննարկման փուլում են 3 ծրագրեր: **Թայեքս**. ստացվել է 30 հայտ, իրականացվել են 7 միջոցառումներ: ԵՀ կողմից հաստատվել են ևս 14 միջոցառումներ, որոնք կիրականացվեն 2016թ.: Ստրագրվել է Սևծովյան ավազանի երկրների համատեղ գործողությունների ծրագրի 2014-2020թթ. համատեղ գործառնական ծրագիրն ու հաստատվել է Ծրագրի ռազմավարությունը: **Սիգմա** գործիքի աջակցությամբ համակարգվել են ֆինանսական վերահսկողության, արտաքին աուդիտի, պետական կառավարման բարեփոխումների ոլորտներում իրականացվող ծրագրերը:

Համագործակցություն այլ երկրների հետ: 2015թ. մայիսի 7-ին ՀՀ կառավարության և ԱՄՆ կառավարության միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային Համաձայնագիրը՝ հայ-ամերիկյան տնտեսական համագործակցության ամրապնդման և հետագա խորացման, կողմերի միջև ապրանքների և ծառայությունների առևտրի ընդլայնման ու դիվերսիֆիկացման, գործարար նախաձեռնությունների ակտիվացման նպատակով: Համաձայնագրով հիմնվել է Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով Խորհուրդը: Խորհրդի անդրանիկ նիստի արդյունքում ընդունվել է գործողությունների համատեղ ծրագիր և նախանշել փոխադարձ առևտրի և ներդրումների խթանման հարցում կատարվելիք հետագա քայլերը և համագործակցության ընդլայնման ուղղությունները:

2015թ. նոյեմբերի 26-27-ը Վիլնյուսում կայացել է առևտրատնտեսական համագործակցության հայ-լիտվական միջկառավարական հանձնաժողովի առաջին նիստը, իսկ 2015թ. դեկտեմբերի 11-ին ք.Պեկինում՝ Առևտրատնտեսական հարցերով հայ-չինական համատեղ հանձնաժողովի ութերորդ նիստը: Արդյունքում ստորագրվել են նիստերի արձանագրությունները և ըստ ոլորտների սահմանվել են հետագա համագործակցության ուղղությունները: Միաժամանակ, նախարարությունը մասնակցել է

հայ-իրանական, հայ-թուրքմենական, հայ-իրաքյան, հայ-քուվեյթյան, հայ-բուլղարական, հայ-ամերիկյան միջկառավարական հանձնաժողովների նիստերի աշխատանքներին:

Կատարվել են աշխատանքներ շուրջ 92 երկկողմ և 59 բազմակողմ համաձայնագրերի կնքման, փորձաքննության և վավերացման ուղղությամբ:

Ներկայումս Հայաստանը օգտվում է ԱՄՆ-ի, Կանադայի, Շվեյցարիայի, Ճապոնիայի և Նորվեգիայի Արտոնությունների ընդհանրացված համակարգ (GSP) արտոնյալ ռեժիմից, ինչը ապահովում է Հայաստանում արտադրված մի շարք ապրանքների համար 0-ական կամ զեղչված մաքսատուրքերով մուտք՝ նշյալ երկրների շուկաներ:

ԱՀԿ հետ համագործակցություն: Իրականացվել են ԱՀԿ շրջանակներում մաքսատուրքի սահմանային դրույքաչափերի ՀՀ ստանձնած պարտավորությունների փոփոխման շրջանակներում ընթացող բանակցային գործընթացը, մշակվել են բանակցային գործընթացի դիրեկտիվները, ուսումնասիրվել են ԱՀԿ 11 անդամ երկրներից ստացված հայտերը, 2015թ. հունիսի 8-11-ը Ժնևում կայացել են բանակցային խմբի հանդիպումները մի շարք երկրների պատվիրակությունների հետ: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել Ղազախստանի՝ ԱՀԿ անդամակցությամբ պայմանավորված խնդիրների ուսումնասիրության և քննարկման նպատակով ստեղծված Բարձր մակարդակի աշխատանքային խմբի աշխատանքներին: Ապահովվել է ոլորտային ծանուցումների ներկայացումը ԱՀԿ քարտուղարությանը:

Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն. Շարունակվել ու առավել ակտիվացել է դոնոր գործընկերների հետ, մասնավորապես Համաշխարհային բանկի խմբի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, ՄԱԿ Զարգացման ծրագրի և այլ կառույցների հետ համագործակցությունը: Կարևոր պետք է համարել Թբիլիսիում ՎԶԵԲ տարեկան ժողովին և Սոֆիայում ՀԲ Հոլանդական խմբի կառավարիչների ժողովին ՀՀ պատվիրակությանը մասնակցությունը, որոնց շրջանակներում կայացած մի շարք բարձրաստիճան հանդիպումների ընթացքում քննարկվել են համագործակցության հետագա պորտֆելը և ուղղությունները: ՎԶԵԲ տարեկան ժողովի շրջանակներում Հայաստանը ներգրավվել ու ներկայացել է ավանդաբար անցկացվող Նեդրումային Սեսիայում: Արդյունավետ պետք է գնահատել ՀԲ Զարգացման քաղաքականության գործառնություն 3-ի, ԱՄՀ ծրագրի 2-րդ վերանայման, ՎԶԵԲ Հայաստանի գործընկերության նոր ռազմավարության, Հայաստան-ՄԱԿ զարգացման աջակցության 2016-2020 ծրագրի ձևավորման ընթացքում ու մի շարք փաստաթղթերից բխող հանձնառությունների իրականացման մասով կառույցների հետ իրականացված համատեղ աշխատանքը:

Գործուն մասնակցություն է ապահովվում ՄԱԿ-ի կայուն զարգացման, Արդյունավետ զարգացման գլոբալ գործընկերության, Հետ-Ռիո+20 պլատֆորմների ներքո տարվող ինչպես միջազգային, այնպես էլ ազգային գործընթացների շրջանակներում:

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2015թ. 9 ամիսների ընթացքում ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ ներհոսքը կազմել է 141.6 մլրդ դրամ (շուրջ 296.4 մլն ԱՄՆ դոլար), որից 125.15 մլրդ դրամը (շուրջ 162.0 մլն ԱՄՆ դոլար) ուղղակի օտարերկրյա ներդրումներ են: 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճը համապատասխանաբար կազմում է 36.7% և 16.8%:

2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը: Վերջինիս իրականացման շրջանակներում մշակվել են «Օտարերկրյա ներդրումների մասին», «Ազատ տնտեսական գոտիների

մասին» ՀՀ օրենքների նախագծերը և «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Գործարկվել է «Մերիդիան» ազատ տնտեսական գոտին, կատարվել են մոտ 14 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և ստեղծվել են 20 նոր աշխատատեղեր: Շահագործման թույլտվություն ստացած ընկերությունների կողմից կկատարվի 17 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ և կստեղծվի շուրջ 160 նոր աշխատատ: «Այյանս» ազատ տնտեսական գոտու շահագործողի թույլտվության վկայական ստացել է 2 ընկերություն, որոնց գործունեության ընթացքում ակնկալվում է շուրջ 10 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ և 80 նոր աշխատատեղերի ստեղծում:

Մաքսատուրքի ազատման արտոնության շրջանակում բավարարվել է 4 ընկերության հայտ: Արտոնության կիրառման արդյունքում ընկերությունների կողմից նախատեսված է կատարել մոտ 47 մլն ԱՄՆ դոլար ներդրումներ և ստեղծել շուրջ 215 նոր աշխատատեղ:

2015թ. ընթացքում «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն ստացված դիմումների հիման վրա հաստատել է արտահանման պայմանագրերով նախատեսվող տարեկան շուրջ 7.1 մլն ԱՄՆ դոլարին համարժեք արտահանման ծավալ սպասարկող ապահովագրական սահմանաչափեր: 2015թ. ընթացքում փաստացի ապահովագրվել են 950 հազար ԱՄՆ դոլարին համարժեք արտահանման գործարքներ:

Բանակցային փուլում են ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության երկկողմ համաձայնագրերի նախագծերը Սերբիայի, Անդորրայի, Չեռնոգորիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության, Կորեայի, Արաբական Միացյալ Էմիրությունների հետ:

ՀԲ անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայի հետ համատեղ իրականացվում է Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիրը (2014-2017թթ.), որի շրջանակ-ներում մշակվել են Ներդրումային ճանապարհային քարտեզը, իրականացվել է ներդրողների հարցում-հետազոտությունը:

2015թ. հոկտեմբերի 15-ին Հայաստանի և Ֆրանսիայի միջև պաշտոնապես մեկնարկել է ԵՄ Թվինինգ ծրագիրը՝ «Ներդրումների խթանման և ներդրումային քաղաքականության ինստիտուցիոնալ համակարգի հզորացում Հայաստանում»: Ծրագրի հիմնական նպատակն է օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանման միջոցով աջակցել ՀՀ տնտեսական աճին, աշխատատեղերի ստեղծմանը, նորամուծությունների և տեխնոլոգիաների փոխանցմանը:

ՀՀ ներդրումային միջավայրը մի շարք երկկողմ գործարար համաժողովների ընթացքում ներկայացվել է լիտվական, ռուսաստանյան, ամերիկյան, ֆրանսիական, ղազախական, բելառուսական, կանադական, մարոկկյան, իրանական, չինական, ճապոնական գործարար համայնքներին: Մասնավորապես, կարելի է առանձնացնել հայ-իրանական բիզնես ֆորումների կազմակերպումը Երևանում և Թեհրանում:

Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ 2016թ. հոկտեմբերին Նյու-Յորքում Հայաստանի միջազգային ներդրումային ֆորումի նախապատրաստման ուղղությամբ:

ՀՀ մասնավոր հատվածից, ինչպես նաև ՀՀ պետական կառավարման մարմիններից հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են զարգացմանն ուղղված շուրջ 40 ներդրումային ծրագրեր:

Ամերիկյան Heritage Foundation կազմակերպության «Տնտեսական ազատության ինդեքս 2016» զեկույցի «Ներդրումների ազատություն» կոմպոնենտով Հայաստանը գրանցվել է աճ 5 միավորով և արդյունքում նշված կոմպոնենտով Հայաստանը 80 միավորով զբաղեցրել է 23 տեղը 186 երկրների շարքում:

ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

«Գործարարությամբ զբաղվելը 2016» զեկույցի տվյալներով Հայաստանը 189 երկրների շարքում զբաղեցնում է 35-րդ տեղը՝ բարելավելով իր դիրքը 3 տեղով:

Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների 2015**թ ծրագրի իրագործման շրջանակներում նախարարության կողմից համակարգվել են տարբեր գերատեսչությունների կողմից իրականացվող աշխատանքները**.

Ստեղծվել են ՀՀ կառավարության 05.12.2013թ. N1364-Ն որոշմամբ հաստատված կարգով նախատեսված ուղեկցող հաշվարկային փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրսգրման, հարկային մարմին ներկայացվող դիմումների, տեղեկանքների, հայտարարությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման, հարկային և մաքսային ծառայություններն դիմում-բողոքների առցանց ներկայացման հնարավորություններ:

Ինժեներական ենթակառուցվածքի օբյեկտների կառուցման համար հողամասերի տրամադրման ընթացակարգերի հստակեցման և հնարավորինս կարճ ժամկետների սահմանման նպատակով ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ կառավարության 2015թ. նոյեմբերի 12-ի «ՀՀ կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N1344-Ն որոշումը: Նշված ընթացակարգերի հստակեցմանը հաջորդել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 25.11.2015թ. N387-Ն որոշման ընդունումը, որով կրճատվել են որոշակի հզորության էլեկտրական էներգիայի միացման ժամկետները (35 օրով): Ներդրվել է նաև շինարարական թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային համակարգ:

2015թ. ընթացքում փորձաքննության ենթարկված 390 իրավական ակտերի նախագծերից շուրջ 22%-ին (84 իրավական ակտի նախագիծ) տրվել է տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում դրական ազդեցությամբ, իսկ շուրջ 9%-ին (35 իրավական ակտի նախագիծ) բացասական ազդեցությամբ կարգավորման ազդեցության գնահատման եզրակացություն: Բացասական ԿԱԳ եզրակացության առկայությամբ իրավական ակտերի նախագծերը, որպես կանոն, միայն լրամշակվելուց հետո են ներկայացվում ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Մշակվել և Կառավարության քննարկմանն է ներկայացվել Գործարար միջավայրի բարելավման 2016թ. ծրագիրը, որում ներառված 40 միջոցառումներից 12-ն ուղղակի ազդեցություն ունեն «Գործարարությամբ զբաղվելը» զեկույցում ՀՀ դիրքի բարելավման վրա: Նախագծի ընդունման և դրանում ներառված միջոցառումների համալիր իրականացման դեպքում, այլ հավասար պայմաններում, զեկույցում հնարավոր է արձանագրել առաջընթաց շուրջ 10 կետով: Նախարարությունում գործող գործարարությամբ զբաղվելու խոչընդոտների հաղթահարման Թեժ գծին 2015թ. ընթացքում ուղղված գործարար և ներդրումային միջավայրին առնչվող շուրջ 200 հարցերին տրվել են հնարավորինս սպառիչ պատասխաններ: Օժանդակություն է ցուցաբերվել նաև պետական մարմինների հետ հարաբերություններում վարչարարական խնդիրների բախվող տնտեսավարողներին:

ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Տեսչական բարեփոխումների իրականացման շրջանակներում՝ տեսչական համակարգի օպտիմալացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին համահունչ 2015թ. հունվարի 9-ին ուժի մեջ է մտել «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքը, որը ապահովում է տեսչական համակարգի օպտիմալացման և տեսչական մարմինների ձևավորման իրավական հիմքերը:

2015թ. ՀՀ վարչապետի հրամանով ստեղծվել է օրենքի կիրարկման ընթացքին հետևող միջգերատեսչական հանձնաժողով և ՀՀ կառավարության կողմից ընդունվել են օրենքի կիրարկումն

ապահովող բոլոր անհրաժեշտ իրավական ակտերը: Արդյունքում, օրենքի հիման վրա 2015թ. սեպտեմբերին ստեղծվել է առաջին մարմինը՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը: 2015թ. ընթացքում նաև իրականացվել են չորս ոլորտների քարտեզագրման աշխատանքներ, որոնք քննարկվել են միջգերատեսչական հանձնաժողովի նիստերում: Ներկայում այդ աշխատանքները շարունակվում են ՀՀ ԱՆ Առողջապահական պետական տեսչության և ՀՀ ֆինանսների նախարարության երկու տեսչությունների ուղղությամբ: 2016թ. համար նախապես նախատեսվել է 3-ից 4 նոր տեսչական մարմնի ստեղծում, ինչպես նաև աշխատանքները կշարունակվեն ռիսկի վրա հիմնված ստուգումների համակարգի (ստուգաթերթերի և ոլորտային մեթոդաբանությունների) կատարելագործման ուղղությամբ՝ ըստ անհրաժեշտության վերջիններս համապատասխանեցնելով ոլորտային օրենքների և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին: Այս շրջանակներում մշակվել է նաև «Ստուգումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ կառավարության աշխատակազմ: «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ինչպես նաև ՀՀ կառավարության ընդունած համապատասխան որոշումներին համապատասխան աշխատանքներ են իրականացվել նաև տեսչական մարմինների միասնական էլեկտրոնային համակարգի ստեղծման և տեսուչների վերապատրաստման դասընթացների կազմակերպման ուղղությամբ:

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«**Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին**» 2015 **թվականի ծրագրի** շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 152.3 մլն դրամը ֆինանսավորվել է ամբողջությամբ: Ծրագրի շրջանակներում սկսնակ և գործող շուրջ 6000 ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 13194 աջակցություն, որի շուրջ 95%-ը ՀՀ մարզերում: Մասնավորապես. 403 սկսնակ գործարարների տրամադրվել է ձեռներեցությանն աջակցություն, 407 ՓՄՁ սուբյեկտի՝ ուսուցողական աջակցություն, 11857 ՓՄՁ սուբյեկտի՝ տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, 259 ՓՄՁ սուբյեկտի՝ աջակցություն ՓՄՁ միջազգայնացման ուղղությամբ, ներառյալ ՁԵՑ գործունեության շրջանակներում, 67 ՓՄՁ սուբյեկտի՝ ոլորտային աջակցություն տեխնոլոգիական խորհրդատվությունների տրամադրման ուղղությամբ, 25 ՓՄՁ սուբյեկտի տրամադրվել է դրամաշնորհ՝ ոլորտային աջակցության ծրագրի շրջանակներում:

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից և «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ կողմից ֆինանսական և ներդրումային աջակցություն է տրամադրվել 225 նոր ստեղծվեող և արդեն գործող տնտեսվարող սուբյեկտների, որի արդյունքում տրամադրված վարկերի ընդհանուր գումարը կազմել է շուրջ 5.4 մլրդ. դրամ՝ մոտ 10% տոկոսադրույքով: Վարկերի 89%-ը տրամադրվել է մարզերում, իսկ 10%-ը՝ Երևանում գործող տնտեսվարող սուբյեկտներին: Իրականացվել է արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից տրամադրված 17 վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորումը Հայաստանի զարգացման հիմնադրամի կողմից:

2015թ. խաղողի և այլ պտուղ-բանջարեղենի մթերումների կազմակերպմանն աջակցելու նպատակով մթերող 18 կազմակերպությունների տրամադրվել են վարկեր: Մատչելի ու արտոնյալ պայմաններով գյուղացիական համայնքներին և գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններին լիզինգով են տրամադրվել շուրջ 100 մլն ՀՀ դրամ արժողությամբ գյուղատնտեսական տեխնիկա:

«Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել են 4 ծրագրեր, աջակցություն են ստացել 164 կին գործարարներ, իսկ ուսուցողական դասընթացների են մասնակցել 230 կին գործարարներ:

Ակտիվ համագործակցություն է իրականացվել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ՝ ուղղված ՓՄՁ սուբյեկտների արտադրության խթանման, երիտասարդների և սկսնակ գործարարների

ձեռնարկատիրական նախաձեռնությունների իրացման և այլ ուղղություններով: ՀՀ և ԵՄ միջև 2015թ. կնքված 2 նշանակալի համաձայնագրերի իրականացման արդյունքում նոր հնարավորություններ կստեղծվեն ՓՄՁ սուբյեկտների զարգացման, նրանց կարողությունների հզորացման համար:

Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից Եվրոպական Հանձնաժողովի և այլ միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվել է «ՓՄՁ քաղաքականության ինդեքսի» գնահատումը՝ Արևելյան Գործընկերության անդամ 6 երկրներում: ՀՀ ցուցանիշների բարելավում է գրանցվել ինչպես նախորդ զեկույցի (2012թ.), այնպես էլ մյուս երկրների ցուցանիշների հետ համեմատ: Հայաստանը համարվել է ամենաշատ և նշանակալի բարեփոխումներ իրականացրած երկիր:

2015թ. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՓՄՁ զարգացման 2016-2018թթ. ռազմավարությունը», որով կարևորվում է գիտելիքի, որակի, ՓՄՁ մրցունակության բարձրացումը գործարար միջավայրի և ձեռնարկատիրական մշակույթի բարելավումը: 2015թ. օրենսդրական փոփոխությունների են իրականացվել «Շրջանառության հարկի» մասին օրենքում, որոնցով ՓՄՁ-ների համար լուծվել են հարկերի հաշվարկման, գործարքների փաստաթղթավորման հետ կապված որոշակի բարդություններ:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՇՈՒԿԱ

2015 թվականին ներքին առևտրի ոլորտում իրականացվել են մի շարք միջոցառումներ, ուղղված ոլորտի իրավական դաշտի և գործարար միջավայրի բարելավմանը: Մասնավորապես.

- Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով ՀՀ-ում հանրահայտ ճանաչված ապրանքային նշան ունեցող թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի և ժամացույցների ներմուծումը կլինի պարզեցված ընթացակարգով:
- Մշակվել և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը ՀՀ տարածքում գործող անմաքս առևտրի խանութների համար ստեղծում է ԱԱՀ-ով հարկման հավասար դաշտ:

ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

Որակի ենթակառուցվածքների 4 **առանձին ծրագրերի** շրջանակներում ՀՀ պետական բյուջեով նախատեսված 258.2 մլն դրամից փաստացի ֆինանսավորվել է 179.5 մլն դրամը:

Ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոնք ուղղված են միջազգային և ԵԱՏՄ շուկաներում արտադրանքի ազատ տեղաշարժի և դրա հետ կապված գործընթացների թափանցիկության ապահովմանը, արտահանման խթանմանը, չափումների միասնականության ապահովման և դրա արդյունքում՝ սպառողների իրավունքների պաշտպանությանը: Ապահովվել է ԵԱՏՄ տարածքում գործող տեխնիկական կանոնակարգերի պահանջներն ապահովող 1187 ստանդարտների մշակումը և հաստատումը: ԵԱՏՄ համապատասխան տեխնիկական կանոնակարգում ներառելու նպատակով մշակվել և ընդունվել են մի շարք նոր ազգային ստանդարտներ:

2015թ. հավատարմագրված արտադրանքի 6 սերտիֆիկացման մարմին և 13 լաբորատորիա գրանցվել են Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրում:

Չափագիտության ոլորտում միջազգային գործելակերպին համարժեք գործունեություն ապահովելու նպատակով մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել ՀՀ կառավարության

որոշման մի շարք նախագծերը, որոնց ընդունումը խթան կհանդիսանա չափագիտության ոլորտում մրցակցային դաշտի ապահովմանը: Ձեռք է բերվել ԱԳԼՃԿ չափման միջոցների ստուգաչափման շարժական լաբորատորիա և խաղալիքներում ծանր մետաղների պարունակության փորձարկումներ իրականացնող լաբորատորիա:

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2015թ. Մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 115 գյուտի և 55 օգտակար մոդելի հայտ: Ազգային ընթացակարգով ստացվել են ապրանքային նշանների գրանցման 1895 հայտ, որոնցից 1340-ը՝ ազգային հայտատուներից: Գրանցվել են 1488 ապրանքային նշաններ, որոնցից 1039-ը՝ ազգային հայտատուների: Նշանների միջազգային գրանցման համակարգի շրջանակներում ստացվել է 3149 ծանուցում: Իրավական պահպանություն է տրամադրվել 1921-ին: ՀՀ-ից ներկայացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման 20 հայտ: Ազգային ընթացակարգով տացվել է արդյունաբերական նմուշի 38 հայտ, որոնցից 29-ը՝ ազգային հայտատուներից, գրանցվել են 32-ը: Միջազգային ընթացակարգով ստացվել է արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին 237 ծանուցում: Երկարաձգվել են 1293 ապրանքային նշանների գրանցման գործողության, ինչպես նաև 201 գյուտի և օգտակար մոդելի արտոնագրերի և արդյունաբերական նմուշի վկայագրերի գործողության ժամկետները:

Ուժը կորցրած է ճանաչվել «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով մագնիսական, օպտիկական, թվային, լազերային և ցանկացած այլ տիպի էլեկտրոնային կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» ՀՀ օրենքը, որի հետևանքով տնտեսվարող սուբյեկտներն ազատվեցին ավելորդ ու անիմաստ տեղեկանքների ձեռքբերման պարտավորությունից:

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրվել է առևտրի իրականացման վայրի կազմակերպման 6, դադարեցվել է՝ 10 լիցենզիա: Կատարվել է 2 լիցենզիայի վերաձևակերպում և գործունեության իրականացման վայրի 3 փոփոխություն: Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման ծանուցման ենթակա գործունեության իրականացման համար ներկայացվել է 1 ծանուցում: Ծանուցում ներկայացրած անձը հաշվառվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից: Տրվել է 1 և դադարեցվել է 2 «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծման լիցենզիա:

ՀՀ-ում թանկարժեք մետաղներ զտարկողների և թանկարժեք մետաղներ հարգորոշողների ու հարգադրոշմողների որակավորման քննություններին մասնակցելու համար ներկայացվել է 57 դիմում: Քննությունների արդյունքում հաղթող են ճանաչվել 41 քաղաքացի որոնց տրվել են որակավորման վկայականներ:

ՀՀ և Եվրոպական հանձնաժողովի միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված հարկային, մաքսային և այլ պարտադիր վճարների գծով արտոնությունների (ԱԱՀ-ից ազատում) կիրառման վերաբերյալ ստացվել է 475 դիմում, որից բավարարվել է 456-ը:

ՀՀ անմշակ ալմաստի ներմուծման և արտահանման ժամանակ Քիմբերլի Գործընթացի հավաստագրերի մասով հաշվառվել է ներմուծման 130 հավաստագիր՝ 152456.5 կարատ ծավալով և 37.14 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով, տրամադրվել է արտահանման 10 հավաստագիր՝ 23613.6 կարատ ծավալով և 590.27 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով:

Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության մտավոր գործունեության

արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության գործընթացի շրջանակներում ստացվել է 6 դիմում, որից 2-ը՝ մերժվել է, տրամադրվել է 3 անհատական և 1 ընդհանուր թույլտվություններ:

Հաստատվել են վերջնական օգտագործողի 15 և տրամադրվել ներմուծման 15 հավաստագրեր:

Որակավորման կարգ է շնորհվել 4 հյուրանոցային տնտեսության օբյեկտների: Որակավորման վկայականի գործողության ժամկետի ավարտմամբ պայմանավորված՝ դադարել է 2 հյուրանոցի և 6 զբոսաշրջային տան որակավորման վկայականների գործողությունը:

Տրամադրվել է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից սպիտակ շաքարի ներմուծման մեկանգամյա 9 լիցենզիա: Տրամադրվել է ՀՀ-ում թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների, թանկարժեք մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղներից հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների՝ ՀՀ տարածքից երրորդ երկրներ արտահանման և ՀՀ տարածք երրորդ երկրներից ներմուծման 100 մեկանգամյա և 25 գլխավոր լիցենզիա:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

2015 թվականից սկսած գործում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Տնտեսական հետազոտությունների կենտրոնը, որի կողմից հաշվետու ժամանակաշրջանում մասնավորապես իրականացվել են հետևյալ վերլուծական աշխատանքները.

- Հայաստանի 2015 թվականի ՀՆԱ հավելաճի կանխատեսում,
- Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման ազդեցության գնահատում,
- Հայաստանի Հանրապետությունում չդիտարկվող (չհաշվառվող) տնտեսության գնահատում,
- ՀՀ տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի գործոնային վերլուծություն,
- Հայ-ռուսական տնտեսական փոխհարաբերության ազդեցության ուղիները Հայաստանի տնտեսության վրա,
- ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի 2015թ. միտումները և 2016թ. կանխատեսումները,
- ՀՀ պոտենցիալ ՀՆԱ-ի և ՀՆԱ-ի խզվածքի ոչ կառուցվածքային մեթոդներով գնահատում: